Երևանի Մխիթար Սեբաստացի կրթահամալիրի և Թբիլիսիի թիվ 98 հանրային դպրոցի միջև հաստատված
բարեկամությունը
և
համագործակցությունը
արդեն
մի
քանի
տարվա
պատմություն
ունի
:

ՀՀ կրթության նախարարության հավանությանն արժանացած «Հայաստան-Վրաստան. հանրակրթական
կամուրջներ
»
համագործակցության

ծրագրի
շրջանակներում
,
այս
օրերին
Թբիլիսիի
թիվ
98
դպրոցում
հյուրընկալվում
են
Մխիթար
Սեբաստացի
կրթահամալիրի
սաներն
իրենց
ուսուցիչների
և
տնօրենի
հետ
:

Երևանցի հյուրերը մարտի 27-ին այցելեցին Վիրահայոց Թեմի «Հայարտուն» կենտրոն: Հանդիպմանը
ներկա
էին
Վրաստանի
նախագահի
խորհրդական
, «
Վրաստան
»
թերթի
խմբագիր
Վան
Բայբուրթյանը
,
Վրաստանում
ՀՀ
դեսպանության
առաջին
խորհրդական
Լևոն
Թորգոմյանը

,
Երևանի
Մխիթար
Սեբաստացի
կրթահամալիրի
տնօրեն
Աշոտ
Բլեյանը
,
Թբիլիսիի
թիվ
98
հանրային
դպրոցի
տնօրեն
Գիորգի
Մոմցեմլիձեն
,
Թբիլիսիի
քաղաքապետարանի
Սոլիկո
Վիրսալաձեի
անվան
թիվ
1
նկարչական
արվեստի
դպրոցի
տնօրեն
Քեթևան
Բարիաբաշվիլին
,
թբիլիսեցի
և
երևանցի
դպրոցականներ
:
Աշոտ
Բլեյանը
հավաքվածներին
ներկայացրեց
Սեբաստացի
կրթահամալիրի
գործունեությունը
,
այն

նախագծերը
,
որ
իրականացվում
են
Թբիլիսիի
թիվ
98
դպրոցի
հետ
համատեղ
,
պատմեց
առաջիկայում
իրականացվող
ծրագրերի
ու
պլանների
մասին
:

Կրթահամալիրի տնօրենը առանձնահատուկ խոսեց վրացերենի ուսուցման դրվածքի մասի
ն
, որ
ը
եվրոպական
լեզուների
շարքում
որպես
երրորդ
օտար
լեզու
ընտրում
են
իր
ղեկավարած
կրթօջախի
սովորողները
:
Օրինակ
հանդիսացավ
Մեղրիից
Երևան
տեղափոխված
Շահանե
Խաչիկյանը
,

ով
վրացերենով
պատմեց
թբիլիսյան
անմոռանալի
օրերի
մասին
և
կատարեց
վրացերեն
երգ
:
Այնուհետև
բանախոսները
արժևորեցին
բարեկամության
այն
կամուրջները
,
որոնք
կառուցվում
են
այս
երկու
կրթօջախների
սաների
համատեղ
միջոցառումներով
,
փոխադարձ
այցելություններով
և
բարեկամությամբ
:

Թբիլիսիի քաղաքապետարանի Սոլիկո Վիրսալաձեի անվան թիվ 1 նկարչական արվեստի դպրոցի
տնօրեն
Քեթևան
Բարիաբաշվիլին
,
ողջունելով
երկու
դպրոցների
բարեկամական
համագործակցությունը

,
ցանկություն
հայտնեց
Երևանի
Սեբաստացի
կրթահամալիրի
օրինակով
իրենց
դպրոցում
ևս
ներդնել
հայերենի
ուսումնասիրության
նորույթը
:

Վիրահայոց Թեմի առաջնորդ Գերաշնորհ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը օրհնության
իր
խոսքում
անդրադարձ
կատարեց
քրիստոնյա
այս
հնագույն
ազգերի
հարուստ
մշակույթի
և
դարավոր
բարեկամության
վրա
:
Նա
իր
աջակցությունն
ու
օգնությունը
խոստացավ
Ս
.
Վիրսալաձեի
անվան
դպրոցի
ղեկավարությանը
հայերենի

ուսուցում
ներդնելու
գործում
:

Մխիթար Սեբաստացի կրթահամալիրի սաները ներկայացրեցին տեսանյութ և կատարեցին էտյուդներ
:

Երևանցի հյուրերին իրենց գեղեցիկ երգը նվիրեցին մենակատարներ Աննա Պողոսովան և Հենրիխ
Պետրոսյանը
: